«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»

2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողով
14-17 սեպտեմբերի 2017թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

СБОРНИК МАТЕРИАЛОВ

2-ая международная молодёжная конференция

«ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ»

14-17 сентября 2017г.
Арцах (НКР), г.Степанакерт

‘‘ISSUES AND PROSPECTS OF THE ARTSAKH REPUBLIC’S INTERNATIONAL RECOGNITION’’

2nd international youth conference
September 14-17, 2017
Stepanakert, Artsakh (NKR)

SOURCEBOOK

ԱԵԳՄՄ-ОМУСА-UYSSA
ԵՐԵՎԱՆ-ЕРЕВАН-YEREVAN
2017

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0
Ա 948

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета Университета Месроп Маштоц г.Степанакерта
Recommended for publication by the decision of the Academic Council of the Mesrop Mashtots University in Stepanakert

Խմբագրական խորհուրդ
Նախագահ՝ ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գագիկ Ղազինյան**
Անդամներ՝ հ.գ.դ., պրոֆ. **Հրանտ Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վալերի Ավանեսյան**, ք.գ.դ., դոց. **Խաչիկ Գալստյան**, ի.գ.դ., պրոֆ. **Վլադիսլավ Գրուզդև**, ք.գ.դ., պրոֆ. **Սոկրատ Խանյան**, ի.գ.դ., պրոֆ. **Աշոտ Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մարիամ Մարգարյան**, տ.գ.դ., պրոֆ. **Հայկ Սարգսյան**, ք.գ.դ., պրոֆ. **Գարիկ Քեռյան**, պ.գ.թ., դոց. **Գրիգոր Բալասանյան,** պ.գ.թ., դոց. **Նելլի Բաղդասարյան**, տ.գ.թ., դոց. **Եվգենյա Հայրիյան**, ի.գ.թ., դոց. **Անահիտ Մանասյան**, հ.գ.թ., դոց. **Վիտյա Յարամիշյան**, տ.գ.թ., դոց. **Կարեն Ներսիսյան**, ի.գ.թ. **Սիրանուշ Պետիկյան**
Քարտուղար՝ ի.գ.թ. **Ավետիք Հարությունյան**

Редакционный совет
Председатель: д.ю.н., проф., академик НАН РА **Гагик Казинян**
Члены: д.п.н., проф. **Грант Аванесян**, д.и.н., проф. **Валерий Аванесян**, д.п.н., доцент **Хачик Галстян**, д.ю.н., проф. **Владислав Груздев**, д.ф.н., проф. **Сократ Ханян**, д.ю.н., проф. **Ашот Хачатрян**, д.п.н., проф. **Мариам Маргарян**, д.э.н., проф. **Айк Саргсян**, д.п.н., проф. **Гарик Керян**, к.и.н., доц. **Григор Баласанян**, к.и.н., доц. **Нелли Багдасарян**, к.э.н., доц. **Евгения Айриян**, к.ю.н., доц. **Анаит Манасян**, к.п.н., доц. **Витя Ярамишян**, к.э.н., доц. **Карен Нерсисян**, к.ю.н. **Сирануш Петикян**
Секретарь: к.ю.н. **Аветик Арутюнян**

Editorial board
Editor-in-Chief: Gagik Ghazinyan, LL.D., Prof., NAS RA Academician
Editors: **Hrant Avanesyan**, Psy.D., Prof., **Valeri Avanesyan**, Doctor of History, Prof., **Khachik Galstyan**, Dr sc. pol., Assoc. Prof., **Vladislav Gruzdev**, LL.D., Prof., **Sokrat Khanyan**, Doctor of Philology, Prof., **Ashot Khachatryan**, LL.D., Prof., **Mariam Margaryan**, Dr sc. pol., Prof., **Hayk Sargsyan**, Dr sc. ec., Prof., **Garik Keryan**, Dr sc. pol., Prof., **Grigor Balasanyan**, Candidate of History, Assoc. Prof., **Nelly Baghdasaryan**, Candidate of History, Assoc. Prof., **Yevgenya Hayriyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Anahit Manasyan** Candidate of Law, Assoc. Prof., **Vitya Yaramishyan,** Candidate of Psy. sc., Assoc. Prof., **Karen Nersisyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Siranush Petkiyan**, Candidate of Law
Secretary: **Avetik Harutyunyan**, Candidate of Law

Ա 948 «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու. – Եր.: ԱԵԳՄՄ, 2017, 284 էջ:

Ժողովածուում ներառված են «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборник включены материалы 2-ой международной молодёжной конференции «Проблемы и перспективы международного признания Республики Арцах».

The material covered by the 2nd international youth conference “Issues and prospects of the Artsakh Republic’s international recognition” are included into the sourcebook.

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0

ISBN 978-9939-1-0643-4

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2017

www.aegmm.org

ԵԱՏՄ* ՀՆԱՐԱՎՈՐ ԴԵՐԸ ԱՐՑԱԽԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Արփինե Մնացականյան
ՀՊՏՀ, ֆինանսական ֆակուլտետ, հայցորդ
arpine1787@mail.ru
Գիտ. ղեկ.՝տ.գ.դ., պրոֆ. Ա.Թավադյան

1994թ. մարտի 29-ին, Ղազախստանի Հանրապետության նախագահ Նուրսուլթան Նազարբաևն առաջին անգամ առաջ քաշեց նոր ինտեգրացիոն միավորման՝ Եվրասիական տնտեսական միության ստեղծման գաղափարը, որը հիմնված էր ընդհանուր պատմության, փոխադարձ տնտեսական ձգողականության մշակույթների սերտ փոխկապակցվածության եւ մարդկային ձգտումների նմանության վրա, ինչն արդյունքում ժողովուրդներին տալու էր եւ այսօր տալիս է հնարավորություն կառուցելու միջազգային բազմակողմ կապերի նոր տեսակ[1]:

Հայաստանն ստիպված էր ընտրել ինտեգրացիոն երկու ճանապարհների միջև՝ կամ ստորագրել ԵՄ կողմից առաջարկված Ասոցացման համաձայնագիրը, կամ էլ քայլեր ձեռնարկել Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի կողմից ստեղծված Մաքսային Միությանը միանալու ուղղությամբ: Հայաստանն ընտրեց երկրորդ ճանապարհը:

Հայաստանի տնտեսությունն սերտորեն կապված է ռուսական շուկային, որը ներկայացնում է հայաստանյան արտահանման ծավալների մեկ քառորդն ու դրամական փոխանցումների մոտ 90%-ը: Ընդ որում, տնտեսությունը դեռևս խիստ դոլարայնացված է, ինչն ավելի է մեծացնում խոցելիությունն արտաքին ցնցումների նկատմամբ[2]:

2013թ. սեպտեմբերի 3-ին ՌԴ կատարած իր այցի ժամանակ ՀՀ նախագահ Ս.Սարգսյանը հայտարարեց, որ ՀՀ-ն գնում է դեպի Մաքսային Միություն, որը հետագայում վերածվեց Եվրասիական Տնտեսական Միության:

Ըստ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Թ. Մանասարյանի եվրաինտեգրման գործընթացը ոչ միայն չի հակասում Մաքսային միության շահերին, այլև, հակառակը, կարող է օգնել ավելի լավ իրացնելու երկրների մրցակցային առավելությունները, այդ թվում ԵՄ շուկաներում, և էլ ավելի ուժեղացնել դիրքերը միջազգային ասպարեզում: Այսինքն ԵՄ-ի և նրա առանձին անդամների հետ տնտեսական և քաղաքական հարաբերությունների ամրապնդումը հնարավոր էր համարում հենց չօգտագործված հնարավորություններն իրացնելու նպատակով[3]:

---

* Եվրասիական տնտեսական միություն, այսուհետ՝ ԵԱՏՄ

[1] http://webcache.googleusercontent.com/search?q=cache:26QPkVTJr7EJ:www.soyuzinfo.am/arm/analitics/detail.php%3FELEMENT_ID%3D1116+&cd=1&hl=hy&ct=clnk&gl=am http://www.soyuzinfo.am/arm/analitics/detail.php?ELEMENT_ID=1116–ի համար: Սա էջի ակնթարթային պատկերն է 25 Հուլիս 2017 20:25:26 GMT-ի դրությամբ: http://www.azg.am/AM/2014053005 <<ԱԶԳ>> ՕՐԱԹԵՐԹ #14, 30-05-2014

[2] ԵՐԿՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ՝ ԸՍՏ ՓՈՔՐ ԲԻԶՆԵՍԻ ԱԿՏԻ. ՀԱՅԱՍՏԱՆ ՓՄՁ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԹԻՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ 2016 ԵՎՐՈՊԱՅԻ ՓՈՔՐ ԲԻԶՆԵՍԻ ԱԿՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ, էջ 6 https://www.oecd.org/globalrelations/Armenia_SME_PI_Country_chapter_ARM.pdf

[3] Մանասերյան Թ., Մաքսային միությունը և Հայաստանը. Ակնկալիքներ և

Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրին Հայաստանի միանալու մասին պայմանագիրն ուժի մեջ մտավ 2015թ. հունվարի 1-ից: ԵԱՏՄ-ին ՀՀ անդամակցումը համընկավ ճգնաժամի հետ, ինչպես նախկին խորհրդային մյուս երկրներում, այպես էլ Հայաստանում, սկսեց տնտեսական անկման փուլ: Թեև ճգնաժամին նախորդած տնտեսական աճը պայմանավորված էր շինարարության ոլորտով, վերջին տարիներին կարևորություն են ձեռք բերել գյուղատնտեսության, ծառայությունների և հանքարդյունաբերության ոլորտները: Հաշվի առնելով երկրի փոքր տարածքը և առևտրի աշխարհաքաղաքական սահմանափակումները՝ ՀՀ կառավարության համար առաջնահերթություն է դարձել արտահանման ծավալների ավելացումը և դրա կազմի դիվերսիֆիկացումը:

Ըստ քաղաքական վերլուծաբան Ա. Սաֆարյանի, 2016 թ. ցույց տվեց, որ տնտեսական նույնիսկ ամենաանպաստ կոնյունկտուրայի պայմաններում Հայաստանից Ռուսաստան արտահանումը աճեց երկնիշ թվերով եւ կազմեց պատմական մաքսիմումը: Փորձագետը դրական է վերաբերում Հայաստանի և Իրանի սահմանին ազատ առևտրի գոտու գործունեությանը, քանի որ այս դեպքում Իրանի շահերը համընկնում են Հայաստանի և Ռուսաստանի շահերին[1]:

Հայկական որոշ ինտերնետային ռեսուրսներ, չունենալով Հայաստանի եվրասիական ինտեգրացիայի դեմ ավելի լուրջ հակափաստարկներ, ներկայացնում են 2016թ. թվային տվյալներ, համաձայն որոնց ԵԱՏՄ-ն 2016թ. ավարտել է 0,3% տնտեսական անկումով՝ հղում կատարելով 2017թ հունվարի 16-ին Եվրասիական տնտեսական հանձնաժողովում ինտեգրացիայի և մակրէկոնոմիկայի նախարար Տատյանա Վալովայայի հարցազրույցին, սակայն չնշելով, որ նա անմիջապես ավելացրել է, որ 2015թ. հետ համեմատած, երբ անկումը 2,5% էր, դա ձեռքբերում է[2]:

Չպետք է մոռանալ, որ միայն Եվրամիության ուղին ընտրելու դեպքում գործ կունենանք արդեն հստակ պահանջներ ունեցող կառույցի հետ, որի նոր անդամները խստորեն պետք է կատարեն դրանք: Իսկ պահանջներն ապրանքների և ծառայությունների շուկայի նկատմամբ, փաստորեն, ձևավորում են ԵՄ առաջին անդամները, որոնք հիմնականում բավարարում են նրանց չափորոշիչները: Արդյունքում՝ փաստորեն, եվրոպական շուկան, հատկապես պատրաստի արտադրանքինը, վաղուց զբաղեցված և բաժանված է, և դրա հասանելիությունը Եվրամիության անգամ նոր անդամների համար չափազանց դժվար է[3]: ԵԱՏՄ անդամակցությունը թույլ է տալիս ՀՀ-ին ձեռքբերել էժան էներգակիրներ. այսօր ՀՀ բնական գազ է ստանում ՌԴ-ից 150 ԱՄՆ դոլարով, այնինչ Ուկրանինան և Մոլդովան վճարում են էապես ավելի[4]:

Նկատի ունենալով ներքին շուկայի փոքրությունը՝ միջազգային առևտուրը վճռորոշ նշանակություն ունի ձեռնարկությունների աճի և մրցունակության համար: Եվրասիական շուկան շատ կարևոր է Հայաստանի համար, քանի որ

մարտահրավերներ, http://theanalyticon.com/?p=3799

[1] Սաֆարյան Ա. ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵՎՅՈՒ – 2017 http://www.azg.am/AM/2017012724

[2] Валовая Т., Зачем нам Евразийский союз? //Аргументы и Факты. 2017. 15 марта, http://www.aif.ru/money/economy/tatyana_valovaya_eaes_vygoden_vsem_stranam_-_chlenam_soyuza

[3] Թավադյան Ա. ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, <<21-րդ ԴԱՐ>>, թիվ 5 (57), 2014, էջ 6

[4] Баласанян Г. Армения и евразийская интеграция: уроки, проблемы и перспективы, Евразийская интеграция: проблемы и перспективы, Сб. материалов круглого стола в рамках Международной школы молодых политологов «Интеграционные процессы на постсоветском пространстве: проблемы и перспективы», М., РИСИ, 2017, с. 10

արդեն գրեթե 100 տարի մեր արտադրանքը ծանոթ է եվրասիական տարածքի սպառողին: Այստեղ ունենք նաև արևելաեվրոպական երկրների դառը փորձը, որոնք ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագրի ստորագրման պահին իրավունք էին ստանում արտահանել իրենց ապրանքները եվրոպական շուկա, բայց 1 տարի անց այդ ապրանքացանկը նվազեց ու հասավ 2-3 անուն ապրանքի՝ պատճառաբանելով որակական և ստանդարտացման անհամապատասխանությունը[1]:

Եվրասիական տնտեսական տարածք տարեցտարի ավելացող ՀՀ արտահանման ծավալներից ակնհայտորեն կարող է օգտվել նաև Արցախը, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ԵԱՏՄ շարժիչ ուժ հանդիսացող ՌԴ-ում Արցախն ունի մշտական ներկայացուցչություն:

2016թ Արցախի արտաքին ապրանքաշրջանառության մեջ արտահանման տեսակարար կշիռը կազմել է 24.0%՝ 2015թ. 19.7%-ի դիմաց: 2015թ-ի նկատմամբ արտահանման ծավալի աճ է արձանագրվել 20 ապրանքախմբերից 7-ի գծով (քիմիական արտադրության ապրանքներ, բուսական ծագման արտադրանք, կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք, հանքահումքային մթերքներ, կոշկեղեն, հովանոցներ, գլխարկներ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր, փայտ և փայտյա իրեր)[2]:

ԵԱՏՄ-ն ստորագրել է ազատ առևտրի մասին պայմանագիր Վիետնամի Հանրապետության հետ, մոտ ապագայում սպասվում է համանման պայմանագրի ստորագրում նաև Իրանի Իսլամական Հանրապետության հետ: Իրանի հետ Ազատ առևտրի պայմանագրի կարևորությունն է նշում նաև տնտեսագետ Թ. Մանասերյանը՝ շեշտելով, որ Իրանը 80-միլիոնանոց շուկա ունի, և ոչ մի դեպքում չի կարելի բաց թողնել այդ երկրի հետ ազատ առևտրի համաձայնագիր ունենալու հնարավորությունը: Նրա դիտարկմամբ՝ ԵԱՏՄ անդամ երկրներից Հայաստանը միակն է, որ ցամաքային սահման ունի Իրանի հետ և կարող է յուրատեսակ կամուրջ հանդիսանալ Եվրասիական տնտեսական միության և Իրանի միջև[3]: Այնուամենայնիվ երկրի տնտեսական զարգացման համար 170 միլիոնանոց շուկան ավելի քան հեռանկարային է, և իրավիճակը ճիշտ օգտագործելու դեպքում հնարավոր է հասնել ցանկալի արդյունքի:

Իրան-Հայաստան սահմանի իրանական և հայկական ափերին Ազատ տնտեսական գոտիների կառուցումը, և հաշվի առնելով աշխարհագրական առումով Արցախի հեռավորությունը սահմանից՝ հիանալի հնարավորություն է ազատ տնտեսական գոտում Արցախի ընկերությունների ներկայացվածությունն ապահովումը և դրա միջոցով Իրանական և եվրասիական շուկաներ դուրս գալը:

Այսօրվա դրությամբ Արցախի իշխանություններն ակտիվ քայլեր են ձեռնարկում երկրի տնտեսության աշխուժացման և զարգացման ուղղությամբ, և այս առումով Մոսկվայում Արցախի մշտական ներկայացուցչությունը լուրջ դերակատարում կարող է ունենալ երկիր պոտենցյալ ներդրողներ ներգրավելու ուղղությամբ:

Արցախի արդյունաբերության զարգացմանը մեծապես կարող է օգնել սեփական արտադրության էժան էլ. էներգիայի առկայությունը՝ հաշվի առնելով Արցախի բազմաթիվ լեռնային վարար գետերի առկայությունը, 2017թ. բարձր տեմպերով շարունակվում է փոքր ՀԷԿ-երի կառուցման ոլորտում ներդրումների

---

[1] Баласанян Г., там же, с. 8

[2] ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ, 2016, էջ 10 http://stat-nkr.am/hy/2010-11-24-11-24-22/712--2016

[3] Մանասերյան Թ. «ԵՏՄ անդամ որոշ երկրներ չեն հետևում խաղի կանոններին»., https://168.am/2017/08/16/830428.html

իրականացումը, որն էլ նպաստում է Արցախի էներգետիկ անվտանգության խնդրի լուծմանն ու հանրապետությունում ինքնաբավության շեմի հաղթահարմանը: Այսօր Արցախում գործում են 16 հիդրոէլեկտրակայաններ, իրականացվում է ևս 8 փոքր ՀԷԿ-երի կառուցման աշխատանքներ:

2017 թ. առաջին կիսամյակում արտադրվել է 184.9 մլն կՎտժ էլեկտրաէներգիա, որը 2016 թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 9.87%-ով, կամ 16.6 մլն կՎտժ-ով: Նույն ժամանակահատվածում երկրում սպառված էլեկտրաէներգիան կազմել է 166.8 մլն կՎտժ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 13.47 %-ով, կամ 19.8 մլն կՎտժ-ով:

Արցախում գործում են 16 հիդրոէլեկտրակայաններ, այդ թվում Սարսանգի ՀԷԿ՝ 50 ՄՎտ դրվածքային հզորությամբ և 15 փոքր ՀԷԿ-եր՝ 56.4 ՄՎտ ընդհանուր դրվածքային հզորությամբ: Միայն 2017 թ. շահագործման է հանձնվել 2 փոքր ՀԷԿ՝ Ջերմաջուր 10.3 ՄՎտ հզորությամբ) և Վիկինգ (1,8 ՄՎտ հզորությամբ) ՀԷԿ-երը: Հանրապետությունում իրականացվում են ևս 9 փոքր ՀԷԿ-երի կառուցման աշխատանքներ, որոնց էլեկտրաէներգիայի տարեկան արտադրության ծավալը կազմելու է շուրջ 263,02 մլն Կվտ/ժ:[1]

Ավարտվել և շահագործման է հանձնվել նաև տնտեսական մեծ նշանակություն ունեցող Սոթք-Հաթերք ենթակայաններն իրար միացնող շուրջ 82 կմ երկարությամբ 110/35/10 կՎ միաշղթա երկրորդ բարձրավոլտ օդային գիծը[2]:

ԱՀ արտաքին գործերի նախարարության տվյալներով 2017 թվականի հունվար – հունիս ամիսներին Արցախում գրանցվել է 26 տոկոս օտարերկրյա զբոսաշրջիկների քանակի աճ, 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ թվականի համեմատ այն կազմել է 46%[3]:

Այսօր մեր կարծիքով գոյություն ունի ԵԱՏՄ շուկա արտահանման ծավալների ավելացման մի քանի ուղղություն, որոնք ակնհայտորեն շահեկան վիճակ կապահովեն Արցախի տնտեսության համար: Դրանցից են՝ Արցախում արտադրվող գինին և կոնյակը, մրգային օղիները, գորգերը, մոտ ապագայում՝ արդյունաբերական լուրջ ծավալներ ակնկալող ձիթապտղի արտադրությունը, սև ձկնկիթի արտադրությունը, որի զարգացմանը նպաստելուն պատրաստամություն հայտնեց վերջերս Արցախ այցելած աշխարհահռչակ «Պետրոսյան խավիար» ընկերության սեփականատեր Արմեն Պետրոսյանը: Արցախի Հանրապետությունը պատրաստվում է տարեկան 15-20 տոննա սև խավիար ստանալ, որի արտադրության ծավալներն առավելագույնի կհասնեն 6-7 տարի անց, ի դեպ, խավիարն ամբողջությամբ կարտահանվի[4]:

Նոր ծրագրեր են մշակվում նաև Արցախում նռան և մեղրի արտադրության ծավալների մեծացումը խթանելու ուղղությամբ: Կատարված գիտական ուսումնասիրությունների համաձայն՝ տեղական կլիման և բուսածածկն ապահովում են նշված երկու ապրանքների որակյալ արտադրությունը[5]:

---

[1] Արցախում արտադրված և սպառված էլեկտրաէներգիայի աճ է գրանցվել http://artsakhpress.am/arm/news/70743/

[2] Արցախում արտադրված էլեկտրաէներգիայի ծավալը աճել է 3,59 տոկոսով, http://mineconomy.nkr.am/?p=4104

[3] ԱՀ զբոսաշրջության բնագավառի առաջին կիսամյակի ցուցանիշներ http://mineconomy.nkr.am/?p=4199

[4] Արցախը լրջորեն զբաղվում է սև խավիարի արտադրությամբ, https://armeniasputnik.am/karabah/20170606/7551713/arcax-sev-xaviar-arayik-harutyunyan.html

[5] Նոր ծրագրեր՝ Արցախում նռան և մեղրի արտադրության ծավալները մեծացնելու ուղղությամբ **http://www.yerkir.am/news/view/133538.html**

Չրերի էկոլոգիական արտադրությունը ևս մեծ դեր կարող է խաղալ, հատկապես թթի չրի արտադրությունը: Ի դեպ, Մարտակերտում կառուցվում է չրերի ժամանակակից գործարան[1]:

Իսկ ինչ վերաբերում է զբոսաշրջությանը, տարեցտարի ավելանում է զբոսաշրջիկների հոսքը տարբեր երկրներից՝ 2016թ համեմատ 2017թ առաջին կիսամյակում արձանագրելով է՝ 46%-ի աճ, որը տպավորիչ թիվ է, եթե հաշվի առնենք ապրիլյան պատերազմի գործոնը:[2]

Ըստ տնտեսագետ Սարգիս Մանուկյանի 2016թ գյուղատնտեսության հանգամանքն էլ վճռորոշ է եղել Հայաստանի և Արցախի տնտեսական ակտիվության ցուցանիշների վրա: Եթե, շինարարությունը երկու երկրների դեպքում էլ զսպել է տնտեսական աճին, ապա գյուղատնտեսության ցուցանիշը Արցախի դեպքում զգալիորեն նպաստել է ՀՆԱ-ի աճին, իսկ Հայաստանի դեպքում ընդհակառակը: եթե բացառենք, գյուղատնտեսության վարքագիծը, ապա մնացած տնտեսական գործընթացների նմանությունը ևս մեկ անգամ հուշում է, որ երկու հայկական պետությունների տնտեսությունները թեև առանձին գործող կառավարությունների իրողությանը, հիմնականում ինտեգրացված են, գործում են փոխհամաձայնեցված և ինչ որ առումով մեկ ամբողջի երկու մասեր են:[3]

Ամփոփելով նշենք, որ ԵԱՏՄ շուկա մտնելու Արցախի հնարավորությունները բավականին բարձր են: Գերազանց բնակլիմայական պայմանները, լեռնային գետերի շնորհիվ առկա էժան էլ. էներգիայի առկայությունը, էկոլոգիապես մաքուր պտուղ- բանջարեղենի առկայությունն Արցախի համար ստեղծում են բոլոր հնարավորությունները վստահ քայլերով մուտք գործելու շուրջ 170 միլիոնանոց եվրասիական շուկա:

Արփինե Մնացականյան

ԵԱՏՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԴԵՐԸ ԱՐՑԱԽԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Բանալի բառեր՝ *ԵԱՏՄ, Արցախ, տնտեսություն, ինտեգրացիա, արտահանում, առևտուր*

Այսօր մեր կարծիքով Արցախի համար առկա է ԵԱՏՄ շուկա մտնելու ռեալ հնարավորություն: Գոյություն ունեն արտահանման ծավալների ավելացման մի քանի ուղղություն, որոնք ակնհայտորեն շահեկան վիճակ են ապահովում տնտեսության համար: Դրանցից են՝ Արցախում արտադրվող գինին և կոնյակը, մրգային օղիները, գորգերը, զբոսաշրջությունը: Գերազանց բնակլիմայական պայմանները, լեռնային գետերի շնորհիվ առկա էժան էլ. էներգիայի առկայությունը, էկոլոգիապես մաքուր պտուղ-բանջարեղենի առկայությունն Արցախի համար ստեղծում են բոլոր հնարավորությունները վստահ քայլերով մուտք գործելու շուրջ 170 միլիոնանոց եվրասիական շուկա:

[1] Արցախն ու «հարավկովկասյան վագրի» ցատկը, http://www.aravot.am/2017/07/27/899396/
[2] Արցախն ու «հարավկովկասյան վագրի» ցատկը, http://www.aravot.am/2017/07/27/899396/
[3] Տնտեսագետ. Արցախի տնտեսության հիմնասյուներն են գյուղատնտեսությունը, հանքարդյունաբերությունը և հիդրոէներգետիկան http://artsakhpress.am/arm/news/65231/

Арпине Мнацаканян

ВОЗМОЖНАЯ РОЛЬ ЕАЭС В ЭКОНОМИЧЕСКОЙ РАЗВИТИИ АРЦАХА

Ключевые слова: *ЕАЭС, Арцах, экономика,интеграция, экспорт, торговля*

По нашему мнению на сегодняшний день для Арцаха есть реальная возможность для вступления в рынок ЕАЭС. Несколько направлений по увеличению обьемов экспорта могут благоприятно отразится на экономику страны. Среди них производимые в Арцахе вино и коньяк, фруктовая водка, ковры, туризм и т.д. Отличные климатические условия, дешевая электраэнергия за счет горных рек, экологически чистые фрукты и овощи создают все условия для вступления Арцаха в около 170 милионный евразийский рынок.

Arpine Mnatsakanyan

THE POSSIBLE ROLE OF THE EAEU IN THE ECONOMIC DEVELOPMENT OF ARTSAKH

Key words: *EAEU, Artsakh, economy, integration, export, trade*

We think, that there is a real opportunity for Artsakh to integrate the EAEU market. Some directions to increase the volume of the export may have a favourable impact on the state of the economy. They are: the wine and the cognacproduced in Artsakh, fruit vodka, carpets, turism, etc.The perfect climate, cheap electricity, produced from the moutain rivers, environmentally friendly fruits and vegetables provide all the conditions to enter the Eurasian market with in about 170 million members.